ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ՀԲՄԱՊՁԲ-20-20/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 8 -ը ապրիլի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՕԲՈՐՈՆ Տեքստիլ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր ԱՐՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՏՐԵՅԴ ՔՕ ԼԻՄԻԹԵԴ-ի հետ) ի դեմս ընկերության տնօրեն Հ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 25.12.2019թ. կնքված № ՀԲՄԱՊՁԲ-20-20/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 240 000 000 (երկու հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011024537 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտ պետ Ն. ՅՈԼՉՅԱՆ	«ՕԲՈՐՈՆ Տեքստիլ» ՍՊԸ ք. Երևան, Բուռնազյան 57 «Էվոկաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1660004598740100 ՀՎՀՀ 00473169 տնօրեն Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների	
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1	Քողարկման ծածկեր /քողարկման ցանցեր՝ օպտիկական/	հատ	240 000	1 000	240 000 000	250	750
Ընդհանուր գումարը՝	240 000 000 (երկու հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ						

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք. Էջմիածին Իսիլե-Մուլինոյի 7 հասցեում:

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ									
		CPV-ի կոդը	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Քողարկման ծածկեր /քողարկման ցանցեր՝ օպտիկական/	39522130/509	60000000	60000000	60000000	240000000	240000000	240000000	240000000	240000000	240000000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտ պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՕԲՈՐՈՆ Տեքստիլ» ՍՊԸ տնօրեն

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ